ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

Ք. Երևան 16.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/79

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.06.2018թ. թիվ 03/26-3/10811-18 գրությամբ «Ռազովալո» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 05306478/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ծաղկաձորի համայնքապետարանի 13.06.2018թ. թիվ 243 գրության հիման վրա, 14.06.2018թ. նախաձեռնել է «Ռազովալո» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>Ծաղկաձորի համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ծաղկաձորի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 13.06.2018թ. թիվ 243 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով հայտարարված ընթացակարգի շրջանակներում, հայտերի բացման նիստի արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ռազովալո» ՍՊԸ-ն: Սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության արդյունքում արձանագրվել է, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարկմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Ռազովալո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ռազովալո» ՍՊԸ-ն 06.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

«Ռազովալո» ՍՊԸ-ն 31.05.2018թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի արդյունքում Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին /այսուհետ նաև՝ Կոմիտե/

ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված հարցմանը, Կոմիտեի կողմից տրվել է եզրակացություն, որի համաձայն Ընկերությունը ունի 76,061 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություններ:

Վերոհիշյալով պայմանավորված «Ռազովալո» ՍՊԸ-ն դիմել է Կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 31.05.2018թ. /հայտը ներկայացնելու օրվա դրությամբ/ Ընկերության կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոգրյալ գրության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից «Ռազովալո» ՍՊԸ-ին 02.07.2018թ. տրվել է թիվ 834 տեղեկանքը, համաձայն որի՝ Ընկերությունը 31.05.2018թ. դրությամբ ունեցել է պետական տուրքի մասով 76,061 ՀՀ դրամի հարկային պարտավորություններ:

Վերը նշված պետական տուրքի գումարը առաջացել է քաղաքաշինության բնագավառում շինարարություն իրականացնելու լիցենզիայի համար նախատեսված գումարը չվճարելու հետ կապված:

Վերոհիշյալով պայմանավորված, «Ռազովալո» ՍՊԸ-ն ընկերությանը սպասարկող բանկի՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի Կենտրոնի մասնաճյուղում 07.06.2018թ. թիվ 000019 վճարման հանձնարարականով 90005169249 գանձապետական հաշվեհամարին կատարել է 85,000 ՀՀ դրամի վճարում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Վերոնշյալից բացի, ցանկանում ենք արձանագրել, որ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգերին մասնակցելու նպատակով «Ռազովալո» ՍՊԸ-ն թիվ 2.1 հավելվածով՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները նշելիս, ընկերության տնօրեն Աղասի Ռազմիկի Մեսրոպյանի նույնականացման քարտի համարը նշել է 0202600751: Ցանկանում ենք հայտնել, որ Ընկերությունը՝ մասնակցելով «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/2», «ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/4» և «ՀՀ ԱՄ ԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգերին թիվ 2.1 հավելվածներով՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները նշելիս, ընկերության տնօրեն Աղասի Ռազմիկի Մեսրոպյանի նույնականացման քարտի համարը նշել է համապատասխանաբար՝ 0112600751, 0212600751 և 1202600751: Այս պարագայում Պատվիրատուն չի ուսումնասիրել և չի արձանագրել տվյալ անհամապատասխանությունը: Այնինչ անհրաժեշտ էր արձանագրել անհամապատասխանությունը և մասնակցին ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 41-րդ կետի համաձայն պետք է տրամադրեր մեկ աշխատանքային օր ժամանակ վերը նշված անհամապատասխանությունները շտկելու համար:

Գտնում ենք, որ այս պարագայում, եթե մասնակցի կողմից չշտկվեր վերոնշյալ անհամապատասխանությունները, մասնակիցը չէր ճանաչվի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, և որպես դրա հետևանք հարցում չէր իրականացվի Կոմիտե, որի արդյունքում նաև չէր արձանագրվի Ընկերության կողմից հարկայաին պարտավորություն ունենալու փաստը:

Բացի այդ, գտնում ենք, որ «Ռոզովալո» ՍՊԸ-ն գնման ընթացակարգերի շրջանակում չի խախտել ստանձնած որևէ պարտավորություն, քանի որ, եթե Ընկերությունը պետական

տուրքի մասով ունեցել է հարկային պարտավորություն, ապա այս պարագայում ընկերությունը իրավունք չէր ունենա հայտ ներկայացնել և մասնակցել գնման ընթացակարգին, որովհետև տվյալ պարագայում ընկերության լիցենզիան պետք է լիներ կասեցված պարտավորություններ ունենալու պատճառով: Սակայն Ընկերությունը վստահ լինելով որ չունի որևէ ժամկետանց պարտավորություն հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին: Տվյալ պարագայում, եթե Ընկերությունը ունեցել է պետական տուրքի մասով հարկային պարտավորություն՝ քաղաքաշինության բնագավառում շինարարություն իրականացնելու լիցենզիայի մասով, ապա ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր մասնակցին, քանի որ վերջինս իրավունք չուներ մասնակցելու գնման ընթացակարգին:

Խնդրում ենք հաշվի առնել վերագրյալը և «Ռազովալո» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Նույն օրը Ընկերությունը ներկայացրել է ևս մեկ գրություն՝ ի լրումն վերը նշված գրությամբ ներկայացված առարկությունների, որով հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 06.07.2018թ. գրության, հայտնում ենք, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից «Ռազովալո» ՍՊԸ-ին 02.07.2018թ. տրվել է թիվ 834 տեղեկանքը, համաձայն որի՝ Ընկերությունը 31.05.2018թ. դրությամբ ունեցել է պետական տուրքի մասով 76,061 ՀՀ դրամի հարկային պարտավորություններ:

Վերը նշված պետական տուրքի գումարը առաջացել է քաղաքաշինության բնագավառում շինարարություն իրականացնելու լիազենզիայի համար նախատեսված գումարը չվճարելու հետ կապված:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել տարեկան պետական տուրքը չվճարելու դեպքում:

Վերոհիշյալով պայմանավորված, «Ռազովալո» ՍՊԸ-ն ընկերությանը սպասարկող բանկի՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի Կենտրոնի մասնաճյուղում 07.06.2018թ. թիվ 000019 վճարման հանձնարարականով 90005169249 գանձապետական հաշվեհամարին կատարել է 85,000 ՀՀ դրամի վճարում:

Այս պարագայում պետք է նշել, որ եթե ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կիրառվեր ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 41-րդ կետը և մասնակցին հնարավորություն տրվեր շտկելու անհամապատասխանությունը, ապա այս դեպքում նիստը կկասեցվեր, մասնակիցը կկատարեր համապատասխան վճարումը, իսկ այնուհետև հավանական կլիներ, որ Կոմիտեի կողմից արդեն չէր արձանագրվի հարկային որևէ պարտավորություն, քանի որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում լիցենզիայի գործողության կասեցումը վերացած է համարվում լիցենզիայի տարեկան պետական տուրքերի, ինչպես նաև դրանց՝ վճարումը ուշացնելու համար օրենքով սահմանված տույժերի գումարների գծով պարտավորությունները կատարելու օրվան հաջորդող օրվանից:

Վերոնշյալից բացի, ցանկանում ենք նշել, որ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգերին մասնակցելու նպատակով «Ռազովալո» ՍՊԸ-ն թիվ 2.1 հավելվածով՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները նշելիս, ընկերության տնօրեն Աղասի Ռազմիկի Մեսրոպյանի նույնականացման քարտի համարը նշել է 0202600751, այնինչ իրականում նույնականացման քարտի համարն է 000625780: Այս պարագայում նույնպես կիրառելի է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Խնդրում ենք հաշվի առնել վերագրյալը և «Ռազովալո» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/79 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.06.2018թ. թիվ 03/26-3/10811-18 գրությունը և կից փաստաթղթերը, Ծաղկաձորի համայնքապետարանի 13.06.2018թ. թիվ 243 գրությունը, «Ռազովալո» ՍՊԸ-ի կողմից

Բողոքներ քննող անձին ներկայացրած առարկությունները, «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 01.06.2018թ. նիստի թիվ 2, 07.06.2018թ. նիստի թիվ 3 և 12.06.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «Ռազովալո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած մասնակցության հայտի պատճենը.

Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար ճեմուղու տարածքում նստարանների հարթակների և ետնամասի հենապատերի կառուցման աշխատանքների գնման նպատակով կազմակերպված «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Ռազովալո» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 01.06.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության՝

- 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Ռազովալո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 1.800.000 ՀՀ դրամ:

- 5-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ռազովալո» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

- 6-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «Ռազովալո» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ռազովալո» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 76,061 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

07.06.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է «Ռազովալո» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստը և որոշել է վերջինիս հայտը մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

- 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն

ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

- 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային

օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչն ընդունեց, որ «Ռազովալո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 31.05.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է 76,061 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն, որն առաջացել է քաղաքաշինության բնագավառում շինարարություն իրականացնելու լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի գումարը սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում: Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ «Ռազովալո» ՍՊԸ-ն վերը նշված տուրքի մասով պարտավորությունը մարելու նպատակով վճարումը կատարել է 07.06.2018թ.-ին՝ համապատասխան գանձապետական հաշվեհամարին կատարելով 85,000 ՀՀ դրամի վճարում:

Նշվածի կապակցությամբ Ընկերության ներկայացուցիչը կարծիք հայտնեց, որ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը գնահատելիս՝ թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ: Մասնավորապես, հանձնաժողովի կողմից չեն պահպանվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 41-րդ կետի պահանջները, ինչը հնարավորություն չի տվել շտկելու անհամապատասխանությունը՝ կատարելով համապատասխան վճարումը, ինչի արդյունքում հավանական կլիներ, որ Կոմիտեի կողմից արդեն չէր արձանագրվի հարկային որևէ պարտավորություն, քանի որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ լիցենզիայի գործողության կասեցումը վերացած է համարվում լիցենզիայի տարեկան պետական տուրքերի, ինչպես նաև դրանց՝ վճարումը ուշացնելու համար օրենքով

սահմանված տույժերի գումարների գծով պարտավորությունները կատարելու օրվան հաջորդող օրվանից:

Բացի այդ, Ընկերության ներկայացուցչի կողմից նշվեց Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտի գնահատմանն առնչվող մեկ այլ փաստ, այն է՝ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ռազովալո» ՍՊԸ-ն թիվ 2.1 հավելվածով՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալները նշելիս, ընկերության տնօրեն Աղասի Ռազմիկի Մեսրոպյանի նույնականացման քարտի համարը նշել է 0202600751, այնինչ, իրականում վերջինիս նույնականացման քարտի համարն է 000625780: Ընկերության ներկայացուցչի խոսքով, նշված պարագայում նույնպես պետք է կիրառվեին Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները, ինչը Հանձնաժողովի կողմից չի ապահովվել:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- Ընկերության կողմից 07.06.2018թ. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ քաղաքաշինության լիցենզիայի համար պետական տուրքի գծով պարտավորությունների կատարման նպատակով փոխանցված 85,000 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 02.07.2018թ. «Ռազովալո» ՍՊԸ-ին տրված թիվ 834 տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 31.05.2018թ. դրությամբ ունեցել է 76,061 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գծով հարկային պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի

մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) վրա նշված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների, որակավորման վկայականների) տրման կամ օրենքով սահմանված դեպքերում գործունեության որոշ տեսակներ իրականացնելու վերաբերյալ ծանուցում ներկայացրած անձանց հաշվառման ամսաթվից ոչ ուշ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ռազովալո» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 31.05.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 76,061 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից քաղաքաշինության բնագավառում շինարարություն իրականացնելու լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի մասով պարտավորությունը մարելու նպատակով վճարումը կատարվել է միայն հայտը ներկայացնելու օրվանից օրեր անց՝ 07.06.2018թ.-ին:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում պետական տուրքի գծով Ընկերության ժամկետանց հարկային պարտավորություններն առաջացել են վերջինիս կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ «Ռազովալո» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին «Ռազովալո» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Միաժամանակ Բողոքներ քննող անձն անհիմն է համարում Ընկերության կողմից հնչեցրած այն փաստարկը, որ, եթե Ընկերության հայտի թիվ 2.1 հավելվածը (մասնակցի իրական շահառուների մասին տվյալները) Հանձնաժողովի կողմից գնահատվեր հրավերի պահանջներին չհամապատասխանող, և վերջինիս հնարավորություն տրվեր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ապա, նշված անհամապատասխանությունը Ընկերության կողմից չշտկելու դեպքում վերջինիս հայտը Հանձնաժողովի կողմից կմերժվեր, Ընկերությունը չէր ճանաչվի առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որպիսի պայմաններում ի հայտ չէին գա Ընկերությանը

Ցուցակում ներառելու հիմք հանդիսացած հանգամանքները, քանի՝ որ վերը նշված իրավիճակում Ընկերությանը կվերագրվեր գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն հանգեցնող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «գ» ենթակետերով նախատեսված խախտումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Ռազովալո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.06.2018թ. թիվ 03/26-3/10811-18 գրությամբ «Ռազովալո» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 05306478/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ռազովալո» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ